



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարար  
Հակոբ Սիմիոյան  
« 17 » 09 2025թ.



## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ

### ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 005 - 25

Նախաձեռնող՝

**«ԼԵՎՈՒՇ» ՍՊԸ**

ք. Երևան, Նար-Դոսի 3-րդ նրբանցք

Գործունեությունը՝

**Կամարիսի բազալտների հանքավայրի երկրորդ  
տեղամասի արդյունահանման /ընդլայնման/  
աշխատանքներ**

Կորայքի մարզ

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 005 - 25

«17» հունիսի 2025թ.

**Կամարիսի բազալտների հանքավայրի երկրորդ տեղամասի արդյունահանման /ընդլայնման/ աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

|                        |  |
|------------------------|--|
| Նախաձեռնող՝            | «ԼԵՎՈՒՇ» ՍՊԸ   |
| Փաստաթղթի տեսակը՝      | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ հաշվետվություն |
| Գործունեության տեսակը՝ | «Ա» կատեգորիա  |
| Տեղադրման վայրը՝       | Կոտայքի մարզ, Աբովյան համայնք, Արամուս բնակավայր                 |

**Ներածական մաս.** «ԼԵՎՈՒՇ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Կոտայքի մարզի Կամարիսի բազալտների հանքավայրի երկրորդ տեղամասի արդյունահանման /ընդլայնման/ աշխատանքներ, որի նախագիծը մշակվել է ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-110-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակ:

Ներկայումս Կամարիսի բազալտների հանքավայրի 2-րդ տեղամասը շահագործվում է:

**Նկարագրական մաս.** Կամարիսի բազալտի հանքավայրի երկրորդ տեղամասը վարչական առումով գտնվում է Կոտայքի մարզի Աբովյան համայնքում՝ Արամուս բնակավայրի սահմաններում: Մոտակա բնակավայրերն են՝ Մայակովսկին՝ 2,4 կմ, Ձորաղբյուրը՝ 2,3 կմ, Արամուսը՝ 2,55 կմ, Կամարիսից հեռավորությունը կազմում է 3,03 կմ: Աբովյան քաղաքը գտնվում է 10 կմ հեռավորության վրա: Հայցվող տարածքի հեռավորությունը Մայակովսկի-Ձորաղբյուր ճանապարհից կազմում է 0,8 կմ:

Հանքավայրի տարածքն աղքատ է բուսականությունից, անտառներ չկան, հողաբուսական շերտը բացակայում է:

Հանքավայրի և հարակից տարածքներում սողանքային երևույթներ չկան:

Հանքավայրի տարածքում կենդանիների և թռչունների բներ, բնադրավայրեր չկան: Հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում, չեն արձանագրվել պատմության և մշակույթի հուշարձաններ, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում բուսական կամ կենդանական տեսակներ և ապրելավայրեր:

Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից նստվածքներ, բազալտներ, խարամներ տուֆեր և չորրորդական ժամանակի կավեր: Երկրաբանական կառուցվածքը վերևից ներքև հետևյալն է՝ ժամանակակից նստվածքներ, բազալտներ, հրաբխային խարամներ, կավեր:





Կամարիսի բազալտների հանքավայրի սահմաններում գրունտային ջրեր չեն հայտնաբերվել: Հանքամարմինը կազմավորող ապարները ծակոտկեն են, ջրակլանող, հանքավայրի ռելիեֆի կառուցվածքը թմբային, այդ իսկ պատճառով, մթնոլորտային ջրերը, ներծծվելով ապարների միջով, հասնում են մինչև ջրամերժ շերտ, մեծ մասը հոսում դեպի ռելիեֆի ստորոտներ:

Կամարիսի բազալտի հանքավայրը բաղկացած է երկու տեղամասից՝ N1 և N2, որոնք տեղադրված են մեկը մյուսից 1,5 կմ հեռավորության վրա և ունեն միևնույն երկրաբանական կառուցվածքը:

Կամարիսի հանքավայրի բազալտների պաշարներն A+B+C1 կարգերով 3579.4 հազ.մ<sup>3</sup> քանակով հաստատվել են ՀՍՍՀ ՊՏՀ-ի 29.06.1982թ. N 260 արձանագրությամբ:

Ընկերությանը 13.03.2020թ տրամադրվել է թիվ 611 պայմանագրով 295625 մ<sup>3</sup> մարվող պաշար, որից 2020-2022թթ ընթացքում մարվել է 82628 մ<sup>3</sup> պաշար, իսկ 2023թ ընթացքում ընկերության տեղեկության համաձայն արդյունահանվել է 23605 մ<sup>3</sup> պաշար:

Պաշարները հաստատված են ՀՍՍՀ 1102-79 «Պատքար տուֆերից, բազալտներից և տրավերտիններից» ստանդարտներին համապատասխան շինաքար ստանալու համար, իսկ դրանց արդյունքում առաջացող ջարդքարը շինարարական խճի (ՀՍՍՀ ԳՈՍՍ 8267-95 «Խիճ քնական քարերից շինարարական աշխատանքների համար») արտադրության համար:

Հանքավայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ 40°13/38// և 44°39/03//

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից՝ տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով, որը ներկայումս իրականացվում է ընկերության կողմից:

Հայցվող պաշարների ծայրակետային կոորդինատները ARM WGS – 84 (ARMREF 02) համակարգով հետևյալն են՝

- |                    |                 |                    |                |
|--------------------|-----------------|--------------------|----------------|
| 1. Y=8470342.1229  | X=4455043.4500, | 2. Y=8470446.0000  | X=4455022.0000 |
| 3. Y=8470415.0000  | X=4454948.0000, | 4. Y=8470459.9908  | X=4454555.6894 |
| 5. Y=8470359.0025  | X=4454546.2775, | 6. Y=8470153.2203  | X=4454543.4732 |
| 7. Y=8470044.1136  | X=4454553.8260, | 8. Y=8470023.8508  | X=4454593.9741 |
| 9. Y=8470203.4866  | X=4454627.6381, | 10. Y=8470184.8373 | X=4454690.4950 |
| 11. Y=8470146.8473 | X=4454680.2664, | 12. Y=8470129.5160 | X=4454742.7917 |
| 13. Y=8469962.6964 | X=4454715.1439, | 14. Y=8469942.8055 | X=4454754.5552 |
| 15. Y=8470201.6040 | X=4454802.3307, | 16. Y=8470127.9705 | X=4455022.6278 |
| 17. Y=8470342.1229 | X=4455043.4529  |                    |                |

Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Արդյունահանման աշխատանքներն իրականացվելու են 1-A, 2-B և 4- C1 կարգի բլոկների սահմաններում:

Բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ պարամետրերը՝

- ամենամեծ երկարությունը՝ 500 մ,
- ամենամեծ լայնությունը՝ 495 մ,
- բացահանքի առավելագույն խորությունը՝ 45.0 մ,
- մակաբացման ապարների հզորությունը՝ 0.5-5 մ,
- օգտակար հանածոյի հզորությունը՝ 3-7 մ,
- օգտակար հանածոյի մարվող հաշվեկշռային պաշարներն ըստ A+B+C1 կարգի կազմում են՝ 983764 մ<sup>3</sup>, այդ թվում՝ A-71153, B- 416134, C1-496477 մ<sup>3</sup>,
- արդյունահանվող պաշարների քանակը՝ 864729 մ<sup>3</sup>, տարեկան արդյունահանվող պաշարներ՝ 45000 մ<sup>3</sup>,
- մակաբացման ապարների քանակը՝ 354254 մ<sup>3</sup>, նախկինում արդյունահանված և ներկայումս գոյություն ունեցող բացահանքի հյուսիսային մասում կուտակված՝ 51462 մ<sup>3</sup>,
- բացահանքի օտարման մակերեսը՝ 15 հա:





Տարեկան արտադրողականությունը՝ 51238 մ<sup>3</sup> մարվող պաշար:

Բացահանքի ծառայման ժամկետը նախատեսվում է 19.2 տարի:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական, խորացող, մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են՝ հանքաստիճանի բարձրությունը՝ 5 մ, անվտանգության բերմայի լայնությունը՝ 2.0 մ, աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյունը՝ 90°, աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 18-20 մ:

Բացահանքի հետագա բնականոն աշխատանքի համար բոլոր հորիզոնների բացումը նախատեսվում է իրականացնել հայցվող տարածքի արևմտյան մասից մոտեցող գրունտային ճանապարհից, որն արդեն իսկ մոտենում է բացահանքի 1545 մ նիշ ունեցող հորիզոնին:

Բլոկների արդյունահանման աշխատանքները աշխատանքների ընթացքում կիրականացվեն՝ միաքարի անջատումը զանգվածից, միաքարի հեռացում հանքախորշից, միաքարի մասնատումը բլոկների և դրանց կոպտամշակում, բլոկների բարձում, թափոնների հեռացում:

Միաքարի անջատումը զանգվածից կիրականացվի CAT 336GC մակնիշի էքսկավատորի վրա սարքավորված հիդրավլիկական մուրճի կիրառմամբ, միաքարի տեղափոխումը հանքախորշից դեպի մասնատման վայր նախատեսվում է կատարել T-330 մակնիշի բուլդոզերի օգնությամբ, միաքարի մասնատումը բլոկների կիրականացվի հորատասեպային եղանակով, իսկ ստացված բլոկները տրանսպորտի մեջ բարձելու համար կկիրառվի KC-4361 մակնիշի ավտոմոբիլային կունկ:

Բացահանքի շահագործման ընթացքում կլինեն օգտակար հանածոյի անխուսափելի (նախագծային) կորուստներ, որոնք բնամասերի տեսքով կմնան բացահանքի կողերում և հատակում և կկազմեն՝ 119035 մ<sup>3</sup> կամ 12.1%, և կորուստներ, որոնք կառաջանան օգտակար հանածոն ավտոմոբիլային թափվելու տեղափոխման ժամանակ:

Բացահանքում մակաբացման ապարները ներկայացված են գլաքարա-խճաքարային, գլաքարային և ավազակավային նյութերով:

Նախկինում արդյունահանված մակաբացման ապարները ներկայումս կուտակված են գոյություն ունեցող բացահանքի հյուսիսային մասում՝ 1,22 հա մակերեսով:

Մակաբացման աշխատանքները նախատեսված է կատարել բուլդոզեր-էքսկավատոր-ավտոմոբիլային լեռնատրանսպորտային համալիրով: Մակաբացման ապարները ավտոմոբիլային թափվելու մեջ բարձման համար կօգտագործվի 2.15 մ<sup>3</sup> շերտի տարողությամբ, հակառակ բահով սարքավորված CAT 336-07 մակնիշի էքսկավատորը:

Մակաբացման ապարները կտեղափոխվեն բացահանքի արևելյան մասում դեռևս ԽՍՀՄ ժամանակաշրջանից արդյունահանված տարածք՝ ձևավորելով արտաքին լցակույտ, որի բարձրությունը կլինի 5 մ, շեպերի թեքման անկյունը՝ 30-33°, զբաղեցրած մակերեսը լցակույտի հիմքում՝ 15,8 հա, վերևի հարթակի մակերեսը՝ 13,6 հա: 1535 մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց մակաբացման ապարները կտեղափոխվեն հանքի տարածք՝ ձևավորելով 14,3 հա մակերեսով, միջին 2.6 մ բարձրությամբ ներքին լցակույտ և կհարթեցվեն: Լցակույտառաջացումը կկատարվի բուլդոզերային եղանակով:

Բացահանք տեխնիկական ջրով մատակարարումը իրականացվելու է օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների ժամանակ փոշեդադարեցման, աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով, որը բերվելու է ՅՈՒՆ 130 մակնիշի ջրցան-վազող մեքենայով, իսկ խմելու ջրի մատակարարումը՝ ՎՄ-ԵԼԵ-1.4 ջրի ցիստեռնով:

Կամարիսի բազալտի հանքավայրի 2-րդ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր են տեխնիկական ճնշումներ շրջակա միջավայրի բաղադրիչների (հողային ռեսուրսներ, օդային ավազան, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) վրա:





Հայցվող տարածքում արդյունահանման աշխատանքների ընթացքում մթնոլորտ փոշու և վնասակար գազերի արտանետումների աղբյուրներն են հանդիսասանում բացահանքը, տրանսպորտը, լցակույտը: Արտանետումները կապված կլինեն քարի արդյունահանման, ջարդ քարի և մակաբացման ապարների բարձման, լցակույտի ձևավորման, ճանապարհներով ավտոտրանսպորտի շարժման հետ:

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Հանքավայրի տարածքից հայցվող տարածքի ջրային հողերը, դրանք բնական ջրհավաք է ստեղծված բնական փոքր իջվացքից, որոնք ջրագուրկ են: Որպես բնապահպանական միջոցառում նախատեսվում է հանքավայրի հյուսիսային եզրագծով բետոնե ջրհեռացնող առվի տեղադրում, որի միջոցով հանքավայրի հյուսիս-արևելյան մասում հնարավոր գոյացող անձրևաջերը կհեռացվեն հանքավայրի տարածքից դեպի նրա հարավ-արևմտյան հատված և կմիացվեն նույն ձորակի շարունակությանը նրա արևմտյան մասով: Նախատեսվող առվի երկարությունը կկազմի 650մ, լայնությունը հատակում՝ 0,5մ, լայնությունը մակերևույթում՝ 0,86 մ, իսկ բարձրությունը՝ 0,5մ:

Լեռնային աշխատանքները ջրային հողին կմոտենան շահագործման 9-րդ տարվանից հետո, որի ընթացքում մշտադիտարկումների արդյունքում եթե կդիտարկվեն ջրային հոսքեր, կճշգրտվեն նրանց առավելագույն ծավալները և ըստ անհրաժեշտության կներառվեն լրացուցիչ միջոցառումներ և տեխնիկական տեխնոլոգիական լուծումներ՝ անխափան ջրհեռացում ապահովելու նպատակով:

Բազալտների արդյունահանման աշխատանքների արդյունքով խախտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնումներն իրականացվելու է շահագործական աշխատանքների ավարտից հետո:

Հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա բազալտի արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը աննշան է, քանի որ ընդհանուր առմամբ տեղամասի տարածաշրջանը հանդիսանում է տնտեսապես ինտենսիվ յուրացված գոտի:

Հանքավայրի տարածքում աղմուկի առաջացման աղբյուրներ կհանդիսանան բացահանքը, լցակույտը, ավտոտրանսպորտը: Հանքավայրերում տեխնիկայի և բեռնատար տրանսպորտի աշխատանքներից գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը սահմանված է 79ԴԲԱ (համաձայն գործող նորմերի): Հաշվի առնելով հանքավայրի հեռավորությունը մոտակա բնակավայրերից՝ գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը շրջակա բնակավայրերի տարածքում կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ շատ ցածր:

Հանքահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, հանքի տարածքում գործարկվող մեքենաներից առաջացող թրթռումները չեն գերազանցելու 85դԲԱ մակարդակը:

Բացահանքի շահագործման ընթացքում կառաջանան բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մեխանիզմներում փոխվող հնացած յուղերը և քսայուղերը, մաշված դետալների և մասերի նորով փոխարինման ժամանակ առաջացած մետաղական թափոնները /մետաղաջարդոնները/ և կենցաղային աղբը, մակաբացման ապարները: Թափոնների քանակի, վտանգավորության դասի, ծածկակարերի և կառավարմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը տրված է գնահատման հաշվետվությունում և հաշվետվությանը կից թափոնների կառավարման պլանում:

Բացահանքի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի ընդհանուր տնտեսական վնասը կկազմի 4827.94 հազ. ՀՀ դրամ/տարի:





Համաձայն գնահատման հաշվետվության՝ նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանը, նվազեցմանը, չեզոքացմանը և փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք թույլ կտան հնարավորինս նվազեցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ հանքավայրի շահագործման ընթացքում, այդ միջոցառումներից են.

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլ) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին (օրական 2 անգամ),
- բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում հնարավոր չափով կանաչապատում՝ թփուտներով,
- թունավոր խառնուրդների չեզոքացման համար դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա գտիչների տեղադրում,
- նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ),
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար, հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում,
- կեղտաջրերի հավաքում հորատիպ զուգարանում, հետագայում դատարկում հատուկ ծառայության ուժերով,
- աղմուկի նվազեցման նպատակով մեքենաների սարքավորում ձայնախլացուցիչներով և այն:

Գնահատման հաշվետվության համաձայն՝ նախատեսվում է նաև իրականացնել լեռնատեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիոն աշխատանքներ: Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո կիրականացվի կենսաբանական ռեկուլտիվացիա՝ հարթեցված հողաբուսական շերտը կպարարտացվի գրանուլացված կենսահումուսով, համալիր օրգանահանքային պարարտանյութերով, այնուհետև կիրականացվի տարածաշրջանի տափաստանային լանդշաֆտներին բնորոշ բույսերի սերմերի ցանք, մարված հանքաստիճանների եզրագծերով երկու շարքով սածիլների տնկում: Մշակված տարածության ռեկուլտիվացված տարածքը կկազմի 15.82 հա:

Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 2767710 ՀՀ դրամ:

Հանքավայրի շահագործման ընթացքում կիրականացվեն նաև շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդը արտանետվող նյութերի որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ: Որպես սահմանային թույլատրելի խտություններ կընդունվեն՝ ածխածնի օքսիդի համար՝ 5 մգ/մ<sup>3</sup>, ազոտի երկօքսիդի համար՝ 0.085 մգ/մ<sup>3</sup>, մրի համար՝ 0.15մգ/մ<sup>3</sup>:
2. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, աղտոտիչ նյութերով արտադրական հրապարակի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ:
3. Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ:





4. Աղտոտիչ նյութերով արտադրական հրապարակի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ և այլն:

Նախատեսվում է իրականացնել նաև ջրհեռացնող առվի քանակական և ծավալային սեզոնային մշտադիտարկումներ տարեկան երկու անգամ՝ գարնաը և աշնանը:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան մասնահանել 200.0 հազ. ՀՀ դրամ, իսկ բնապահպանական միջոցառումների իրականացման համար՝ 250000 ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի Կամարիսի բազալտների հանքավայրի երկրորդ տեղամասի արդյունահանման /ընդլայնման/ աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Արամուս բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացվել են չորս հանրային քննարկումներ, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Մասնակիցների կողմից կարևորվել է հանքավայրի շահագործման աշխատանքներում աշխատատեղերի ստեղծումն ու ընկերության կողմից համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, կադաստրի կոմիտեից, Կոտայքի մարզպետարանից, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից, տեղական ինքնակառավարման մարմիններից, որոնք ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում և ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներում:

Ամփոփելով նախագծային փաստաթղթերի և ՇՄԱԳ հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի պահպանության և սոցիալական հնարավոր ազդեցությունների կանխարգելման տեսանկյունից նախատեսվել են բավարար միջոցառումներ և գործողությունների ծրագիր:

ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման արդյունքում հանքավայրի շահագործման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Աշխատանքների իրականացման ընթացքում պահպանել ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծային փաստաթղթերում ամրագրված տեխնոլոգիական լուծումների, բնապահպանական պահանջների կատարումը, ինչպես նաև համայնքում ընկերության կողմից նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացման ապահովումը:

2. Լեռնային աշխատանքների 9-րդ տարում, մինչ ջրային նպատակային նշանակության հողերում արդյունահանում իրականացնելը, անհրաժեշտ է վերանայել աշխատանքային նախագիծը և փոփոխված նախագծային փաստաթղթերը ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն փորձաքննության:

3. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի «Ընկերագրագրում»





հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» N191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:

4. Գործունեության իրականացման ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը /կարևորելով փոշենստեցման նպատակով պարբերաբար ջրցանը/ և ժամանակացույցերը:

5. Իրականացնել արդյունաբերական հրապարակի կանաչապատում՝ թփուտներով որը սահմանված է հաշվետվությամբ:

6. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմինին:

7. Աշխատանքների իրականացման ընթացքում ապահովել և պահպանել՝ ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

## ԵՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«ԼԵՎՈՒՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Կամարիսի բազալտների հանքավայրի երկրորդ տեղամասի արդյունահանման /ընդլայնման/ աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնագ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝



Նելլի Նասիրյան